Գ-2

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁՎ-20/1-ՏԵԽՀՍԿՈՂ/2

N 11/351 - 2019

ք. Երևան «28» 12 2019թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԳԱՐԳԱՍ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործընթացի ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են նախագծա-նախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **<u>549 000 (հինգ հարյուր քառասունինը հազար)</u>** ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **ՀՀ ԱԱԾ**<br>**ք.Երևան, Նալբանդյան104**<br>**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**<br>**Հ/հ 900011301067**<br>**ՀՎՀՀ 01507079**<br><br>**Տնօրենի տեղակալ** **Ա. Հակոբյան** | **<<ԳԱՐԳԱՍ>> ՍՊԸ**<br>**Ք. Կապան, Բաղաբերդ թաղ. 26տ.**<br>**ԱՇԻԲ Կապան մ/6**<br><br>**Հ/հ 2470804705000000**<br>**ՀՎՀՀ 09423167**<br><br>**Տնօրեն** **Գ. Գասպարյան** |

Հավելված N 1
« 25 » 12 2019թ. կնքված
N111351-2019 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 4 | տեխնիկական հսկողության ծառայություններ<br>71351540/504 | ՀՀ ԱԱԾ ՍՁ 5070 Զ/Մ 3-րդ ՍՈՒ-ի զորանոցի և օժանդակ շինությունների կապիտալ վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ Համաձայն N 4 ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎԻ | դրամ | 549000 | 1 | Հարավ-Արևելյան սահման | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 335 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ Ա. Հակոբյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<ԳԱՐԳԱՍ>> ՍՊԸ
Ք. Կապան, Բաղաբերդ թաղ. 26տ.
ԱՇԻԲ Կապան մ/ճ

Հ/հ 2470804705000000
ՀՎՀՀ 09423167

Տնօրեն Գ. Գասպարյան

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ N 4**

ՉԱՓԱԲԱԺԻՆ 4

**<<ՀՀ ԱԱԾ ՍԶ 5070 Զ/Մ 3-րդ ՍՈՒ-ի զորանոցի և օժանդակ շինությունների կապիտալ վերանորոգման>>**

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

**տեխնիկական հսկողության ծառայությունների**

| h/h | Աշխատանքների անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի ընդ.արժ ՀՀ դրամ | Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| | *1.Նախապատրաստական աշխատանքներ* | | | | |
| 1 | Ճակատային պատերի կիր-ավազային սվաղի քանդում 3սմ | 100քմ | 4,8 | 18624 | 89394 |
| 2 | Ներսի պատերի կիր-ավազային սվաղի քանդում 3սմ | 100քմ | 12,6326 | 18624 | 235266 |
| 3 | Միջնորմների քանդում 20սմ հաստ. | 100քմ | 0,607 | 84908 | 51539 |
| 4 | Քարե շարվածքով արտաքին պատի քանդում 70սմ | $մ^3$ | 1,6 | 12787 | 20460 |
| 5 | Կերամիկական սալիկներից հատակի քանդում | 100քմ | 2,469 | 44348 | 109495 |
| 6 | Ցեմենտավազե հարթեցնող շերտի քանդում 30մմ հաստ. | քմ | 246,9 | 156 | 38613 |
| 7 | Փայտե հատակի քանդում | 100քմ | 2,142 | 48666 | 104243 |
| 8 | Դռների ապմոնտաժում | 100քմ | 0,429 | 123048 | 52787 |
| 9 | Պատուհանների ապմոնտաժում | 100քմ | 0,651 | 207266 | 134930 |
| 10 | Ցանցից միջնորմի ապամոնտաժում | քմ | 8,70 | 3744 | 32575 |
| 11 | Լվացարանների ապամոնտաժում | հատ | 8 | 991 | 7927 |
| 12 | Ջրատար մետաղական խողովակների ապամոնտաժում Φ15;25 մմ. | 100գծմ | 0,25 | 34008 | 8502 |
| 13 | Ջրատար մետաղական խողովակների ապամոնտաժում Φ57 մմ. | 100գծմ | 0,15 | 58792 | 8819 |
| 14 | Թուջե խողովակների և ձևավոր մասերի ապամոնտաժում Φ50մմ | 100գծմ | 0,2 | 78239 | 15648 |
| 15 | Դիտակետի տանիքի թիթեղի քանդում | քմ | 6,5 | 100 | 652 |
| 16 | Բազրիքների ապամոնտաժում | տ | 0,14 | 89931 | 12590 |
| 17 | Դիտակետի փայտե տնակի կազմատում | խմ | 1,1 | 24027 | 26430 |
| 18 | Տարածքի մաքրում շին.աղբից և տեղափոխում 50մ հեռավորության վրա | տ | 109,60 | 2085 | 228560 |
| 19 | Շին. աղբի բարձում ա/հ վրա | տ | 109,60 | 361 | 39559 |
| 20 | Շին աղբի տեղափոխում լցակույտ 3կմ հեռավորության վրա | տ | 109,60 | 1378 | 151051 |
| 21 | Աշխատանքներ լցակույտում | 1000խմ | 0,0685 | 46619 | 3193 |
| | *2.Ընդհանուր շինարարական աշխատանքներ* | | | | |
| 22 | 6в III կարգի գրունտի մշակում պահուստում 0.25 խմ էքսկավ., բարձում ա/հ վրա | 1000խմ | 0,07025 | 345159 | 24247 |
| 23 | Գրունտի տեղափոխում 1կմ հեռավորության վրա | տ | 136,99 | 865 | 118547 |
| 24 | Գրունտի լիցք և հարթում ձեռքով | 100քմ | 2,453 | 20052 | 49187 |
| 25 | Գրունտի խտացում պնևմատոփաններով | 100խմ | 0,7025 | 28300 | 19881 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | Գրունտի ջրում | 100խմ | 0,7025 | 29987 | 21066 |
| 27 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 100մմ | խմ | 15,530 | 14100 | 218971 |
| 28 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5դասի բետոնով, 100մմ հաստությամբ | խմ | 15,530 | 40724 | 632445 |
| 29 | Ներսի պատերի բարձրորակ սվաղ գաջե շաղախով | քմ | 1181 | 2610 | 3082410 |
| 30 | Ցանցի տեղադրում սվաղի տակ | 100քմ | 11,81 | 86830 | 1025460 |
| 31 | Դրսի պատերի սվաղ ցեմենտավազե շաղախով | քմ | 506,34 | 1517 | 768007 |
| 32 | Պատերի սվաղ ցեմենտավազե շաղախով կեր.սալիկի տակ | քմ | 84 | 1302 | 109389 |
| 33 | Գիպսակարտոնե կախովի առաստաղի կարկասի կառուցում | 100քմ | 4,770 | 515609 | 2459455 |
| 34 | Գիպսակարտոնե սալիկների տեղադրում | 100քմ | 4,270 | 295786 | 1263005 |
| 35 | Գիպսակարտոնե ջրակյուն  սալիկների տեղադրում | 100քմ | 0,500 | 324346 | 162173 |
| 36 | Պատերի ներկում լատեքսային ներկով մածիկապատումով | 100քմ | 7,0076 | 149458 | 1047340 |
| 37 | Առաստաղի ներկում լատեքսային ներկով 2անգամից, մածիկապատումով | 100քմ | 4,759 | 174964 | 832656 |
| 38 | Պատերի ներկում յուղաներկով 2անգամից, մածիկապատումով | 100քմ | 4,800 | 127752 | 613209 |
| 39 | Շենքի գետնախարիսխի ջրամեկուսացում բիտումային մածիկով | 100քմ | 1,044 | 91482 | 95508 |
| 40 | Շենքի սալվածքի իրականացում B15 դասի բետոնով, 150մմ հաստությամբ | 100քմ | 1,1600 | 654836 | 759610 |
| 41 | Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով 2անգամից | 100քմ | 5,0634 | 66692 | 337687 |
| 42 | Հատակի ցեմենտավազե շերտի իրականացում 30մմ հաստ. | քմ | 402,1 | 1459 | 586618 |
| 43 | Հատակի իրականացում կերամագրանիտե սալիկներից | քմ | 303,9 | 9854 | 2994752 |
| 44 | Հատակի իրականացում մետլախից | քմ | 21,9 | 9854 | 215811 |
| 45 | Լամինատե12մմ հաստ. սալիկներով հատակի կառուցում պառալոնի վրա, ներառյալ շրիշակները | $մ^2$ | 61,5 | 8827 | 542845 |
| 46 | Շրիշակների իրականացում կերամագրանիտե սալիկներից h=80մմ | 100գծմ | 2,6 | 61875 | 160875 |
| 47 | Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով (հախճասալերով) | քմ | 84,0 | 10905 | 916047 |
| 48 | Հատակի տափագերանների տեղադրում 100x100(h)մմ | քմ | 73,70 | 3697 | 272474 |
| 49 | Հատակի իրականացում 4.5սմ տախտակից տափագերանների վրա, ներառյալ շրիշակները | քմ | 73,700 | 11270 | 830619 |
| 50 | Տախտակե հատակի հղկում | քմ | 73,7 | 745 | 54878 |
| 51 | Տախտակե հատակի յուղաներկում 2 շերտից | քմ | 73,7 | 1260 | 92866 |
| 52 | Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող պատուհանների տեղադրում | $մ^2$ | 61 | 43446 | 2650213 |
| 53 | Փայտե դռների տեղադրում -10հատ | 100քմ | 0,2432 | 6002239 | 1459745 |
| 54 | Ներդիր փականների տեղադրում, ներառյալ բռնակները | հատ | 10 | 8820 | 88200 |
| 55 | Ծխնիների տեղադրում | զույգ | 30 | 1176 | 35280 |
| 56 | Մետաղական լամինապատ մուտքի դռների տեղադրում -2 հատ | քմ | 8,40 | 8431 | 70822 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 57 | Մետաղական լամինապատ դռան բլոկ | հատ | 2 | 100030 | 200061 |
| 58 | Մետաղական դռան պատրաստում և տեղադրում - 6 հատ | քմ | 12,600 | 50115 | 631449 |
| 59 | Ներդիր փականներ, ներառյալ բռնակները | հատ | 6 | 8820 | 52920 |
| 60 | Ծխնիներ | զույգ | 18 | 2352 | 42336 |
| 61 | Մետաղական դռների պատում հակակոռոզիոն ներկով | տ | 0,141 | 18458 | 2603 |
| 62 | Մետաղական դռների յուղաներկում 2 շերտով | քմ | 30,24 | 903 | 27302 |
| 63 | Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., խուլ, 4մմ, պրոֆիլ (արտերկիր), դռների տեղադրում - 2հատ | մ$^2$ | 3,8 | 37240 | 140769 |
| 64 | Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), արտաքին վիտրաժի տեղադրում | մ$^2$ | 5,9 | 29400 | 173460 |
| 65 | Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), արտաքին դռան տեղադրում վիտրաժի մեջ | մ$^2$ | 2,0 | 46746 | 93492 |
| 66 | Պլաստմասե սպիտակ պատուհանագոգի տեղադրում 50սմ լայնությամբ | գծ.մ | 36,4 | 5023 | 182837 |
| 67 | Փայտե դռների յուղաներկում | 100քմ | 0,584 | 163763 | 95585 |
| 68 | Մետաղական կարկասով, լամինատե դարակներով 11 բջջանոց դարակաշարի պատրաստում | քմ (հիմքի) | 3,000 | 293101 | 879302 |
| 69 | Ճաղավանդակից միջնորմի պատրաստում | քմ | 16,800 | 22974 | 385969 |
| 70 | Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում | տ | 1,766 | 24334 | 42973 |
| 71 | Աստիճանների խամքարաբետոնե հիմք B7.5 դասի ծանր բետոնով և բազալտե խամքարով | խմ | 3,200 | 43137 | 138038 |
| 72 | Բետոնե աստիճանների կառուցում B7.5 դասի բետոնից | խմ | 4,000 | 52481 | 209924 |
| | ***3. Ներքին էլեկտրատեխնիկական մաս*** | | | | |
| 73 | Պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ВВГ - 0.66 3x2.5 մմ2 | գծմ | 70 | 1554 | 108810 |
| 74 | Պղնձե ջիղերով մալուխի տեղադրում ВВГ - 0.66 4x16 մմ2 | գծմ | 35 | 4876 | 170655 |
| 75 | Հաղորդալարի անցկացում ППВГ-2x2.5մմ2 | գծմ | 600,0 | 368 | 220899 |
| 76 | Հաղորդալարի անցկացում ППВГ-2x1.5մմ2 | գծմ | 200,0 | 342 | 68412 |
| 77 | Հաղորդալարի անցկացում ППВГ-2x4մմ2 | գծմ | 200,0 | 528 | 105542 |
| 78 | Ճյուղավորման պլաստմասե տուփի տեղադրում | հատ | 35 | 2417 | 84598 |
| 79 | Անջատիչների և վարդակների համար տուփերի տեղադրում | հատ | 82 | 532 | 43627 |
| 80 | Խծակի հողանցումով երկբևեր վարդակի տեղադրում | հատ | 60 | 1673 | 100396 |
| 81 | Միատեղ անջատիչի տեղադրում | հատ | 14 | 1423 | 19917 |
| 82 | Երկտեղ անջատիչի տեղադրում | հատ | 8 | 2021 | 16166 |
| 83 | Լուսատու առաստաղային LED լամպով , (բաց տեղադրման 60x60սմ) 220Վ, 36Վտ | լրակազմ | 58 | 20591 | 1194271 |
| 84 | Լուսատու ներկառուցված LED լամպով 220Վ, 7Վտ, Φ 120մմ | լրակազմ | 8 | 6071 | 48570 |
| 85 | Լուսատու առաստաղային LED լամպով 220Վ,18Վտ,IP 54 | լրակազմ | 3 | 17198 | 51594 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 86 | Եռաֆազ ավտոմատ 63Ա անջատիչի տեղադրում | հատ | 2 | 5833 | 11665 |
| 87 | Եռաֆազ ավտոմատ 40Ա անջատիչի տեղադրում | հատ | 2 | 5548 | 11096 |
| 88 | Միաֆազ ավտոմատ 25Ա անջատիչի տեղադրում | հատ | 16 | 3269 | 52302 |
| 89 | Մուտքի արկղի տեղադրում , «ЯБПВУ-1М» 100Ա | հատ | 1 | 60307 | 60307 |
| | ***4 Կենցաղային կոյուղի*** | | | | |
| 90 | Կոյուղու պոլիվինիլքլորիդե Φ110x3.2մմ խողովակների մոնտաժում | գծմ | 20,0 | 1812 | 36243 |
| 91 | Կոյուղու պոլիվինիլքլորիդե Φ50x3.2մմ խողովակների մոնտաժում | գծմ | 18,0 | 1189 | 21408 |
| 92 | Լվացարանի տեղադրում խառնիչի հետ միասին | հատ | 3 | 37263 | 111788 |
| 93 | Խառնիչ լոգարանի | հատ | 2 | 8887 | 17775 |
| 94 | Զատակադիր տակդիրի տեղադրում | հատ | 1 | 64324 | 64324 |
| 95 | Երկտեղանի խոհանոցակոնքի տեղադրում խառնիչի հետ միասին | հատ | 2 | 31935 | 63869 |
| 96 | Զոսակների տեղադրում Φ50մմ | հատ | 3 | 2147 | 6442 |
| 97 | ՊՎՔ Φ 50մմ ձևավոր մասերի տեղադրում | հատ | 12 | 2767 | 33203 |
| 98 | ՊՎՔ Φ 110մմ ձևավոր մասերի տեղադրում | հատ | 4 | 3114 | 12456 |
| 99 | Միացում գործող ներքին ցանցին | տեղ | 1 | 9342 | 9342 |
| | ***5 Ներքին ջրամատակարարում*** | | | | |
| 100 | Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Φ15մմ | գծ.մ. | 26,0 | 1000 | 25999 |
| 101 | Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Φ20մմ | գծ.մ. | 12,0 | 1119 | 13433 |
| 102 | Ձևավոր մասեր | հատ | 30 | 1224 | 36729 |
| 103 | Բրոնզե փականների տեղադրում Φ15մմ | հատ | 5 | 4179 | 20895 |
| 104 | Բրոնզե փականների տեղադրում Φ20մմ | հատ | 2 | 5126 | 10252 |
| 105 | «Արիստոն» ջրատաքացուցիչի տեղադրում 80լ | հատ | 3 | 82131 | 246393 |
| 106 | Միացում գործող ներքին ցանցին Φ15մմ | տեղ | 1 | 6691 | 6691 |
| 107 | Միացում գործող ներքին ցանցին Φ20մմ | տեղ | 1 | 7649 | 7649 |
| | ***6. Դիտակետ աշտարակի վրա*** | | | | |
| 108 | Մետաղական հեծանների տեղադրում | տ | 0,140 | 753049 | 105427 |
| 109 | Մետաղական կապերի տեղադրում | տ | 0,920 | 670007 | 616406 |
| 110 | Մետաղական բազրիքների տեղադրում գրոխոտի ցանցից և քառակուսի խողովակից | տ | 0,390 | 544228 | 212249 |
| 111 | Դիտակետի ծածկույթի իրականացում 0.7մմ ալիքավոր ցինկապատ թիթեղից փայտե կավարամածի վրայով | քմ | 37,800 | 10862 | 410565 |
| 112 | Գագաթի կառուցում հարթ ցինկապատ 0.7մմ թիթեղից | գծմ | 10,000 | 9137 | 91365 |
| 113 | Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում | տ | 1,460 | 41803 | 61033 |
| | ***7. Պարիսպ*** | | | | |
| 114 | 3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով կուլից | 1000 մ3 | 0,034 | 570373 | 19393 |
| 115 | Գրունտի ետլիծք ձեռքով | 100 մ3 | 0,02 | 92640 | 1853 |
| 116 | Ավելորդ գրունտի համահարթում ձեռքով | մ3 | 32,0 | 201 | 6417 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տեղում | | | | |
| 117 | Խամքարաբետոնե հիմքի կառուցում B12.5 դասի բետոնով | մ3 | 33,2 | 37085 | 1231222 |
| 118 | Բետոնե պատեր B12.5 դասի բետոնով | մ3 | 20,58 | 51570 | 1061311 |
| 119 | Ամրան Φ12A500C դասի | տ | 0,2919 | 398152 | 116222 |
| 120 | Երկաթբետոնե միջասյուների կառուցում B15 դասի բետոնով | մ3 | 5,720 | 96222 | 550389 |
| 121 | Ամրան A500C | տ | 0,693 | 398152 | 275919 |
| 122 | Ամրան Ac1 | տ | 0,173 | 502429 | 86920 |
| 123 | Ե/բետոնյա բարավորի պատրաստում B15 դասի բետոնից | մ3 | 0,120 | 71368 | 8564 |
| 124 | Ամրան A500-C | տ | 0,0107 | 398152 | 4260 |
| 125 | Ամրան Ac-1 | տ | 0,0025 | 502429 | 1256 |
| 126 | Ե/բետոնյա գոտու պատրաստում B15 դասի բետոնից | մ3 | 2,460 | 57296 | 140947 |
| 127 | Ամրան A500-C | տ | 0,2147 | 398152 | 85483 |
| 128 | Ամրան Ac-1 | տ | 0,0291 | 502429 | 14621 |
| 129 | Պատերի ամրանավորում ցանցերով Φ6Ac1 | տ | 0,2363 | 562596 | 132942 |
| 130 | Կանոնավոր ձևի տուֆե բլոկներից պարիսպի կառուցում | մ3 | 90,76 | 22815 | 2070689 |
| 131 | Մետաղական դարպաս 4*2.5մ / 552կգ -1հատ | տ | 0,552 | 655499 | 361835 |
| 132 | Դարպասի ներկում յուղաներկով | 100մ2 | 0,24 | 40889 | 9813 |
| 133 | Պողպատե խուլ դռների տեղադրում 0.9x2.1 | հատ | 2 | 48334 | 96667 |
| | Ընդամենը (ներառյալ 13.3% -վերադիր ծախս, 1.5% -ժամանակավոր կառույցների համար, 0.75% - ձմեռային թանկացում, 1.5% -փոքր ծավալի համար ) | | | | 40148443 |
| | Շահույթ 11% | | | | 4416329 |
| | Ընդամենը | | | | 44564772 |
| | Չնախատեսված ծախսեր 3% | | | | 1336943 |
| | Ընդամենը | | | | 45901715 |
| | ԱԱՀ 20% | | | | 9180343 |
| | Ընդամենը (ՀՀ դրամ) | | | | 55082058 |

Հավելված N 2
«25» 12 2019թ. կնքված
N111351-2019 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 71351540/504 | տեխնիկական հսկողության ծառայություններ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ Ա. Հակոբյան

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<ԳԱՐԳԱՍ>> ՍՊԸ
Ք. Կապան, Բաղաբերդ թաղ. 26տ.
ԱՇԻԲ Կապան մ/6

Հ/հ 2470804705000000
ՀՎՀՀ 09423167

Տնօրեն Գ. Գասպարյան

*Հավելված 3*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________ | հհ________ |
| հվհհ ________ | հվհհ________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________ | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«     »     20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը        Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը        պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն